ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 2019 թվականի մայիսի 31-ի N02/14/03200-2019 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Իրականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներ՝ 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի հողային հաշվեկշիռը համաձայնեցնել համայնքի ավագանու հետ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

20 19 թ. հունիսի 26
գ.Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 25-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքում 2019 թվականի հունիսի 20-ին և հունիսի 25-ին բռնկված հրդեհի հետևանքով գյուղացիական տնտեսություններին պատճառած վնասների չափերն ուսումնասիրելու և արձանագրելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահ Գերասիմ Մխիթարյանին՝ իրականացնել սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներ և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ղեկավարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

20 19 թ. հունիսի 26
գ.Այգեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեկ
համայնքի ղեկավարի
2019 թվականի հունիսի 26-ի N25-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ	-	Մխիթարյան Գերասիմ	- ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ)
Հանձնաժողովի անդամներ	-	Հովհաննիսյան Ներսես	- ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ)
		Գրիգորյան Սահակ	- ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի համայնքապետարանի կոմունալ ծառայող
		Նազարյան Ռոբերտ	- ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ համայնքի բնակիչ, ջրբաշխ
		Կոստանյան Մայիս	- ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ համայնքի բնակիչ

ԱՅԳԵԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ _____ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ